

Առաւ մշակը, ասաց ինքնիրան,
Սորանով պահեմ ողջ մի գերգաստան.
Գլուխ քաշ գնաց
Թուլացած, յոգնած:
Զուրկ ընտանեկան քաղցրութիւններից
Ու իմ սիրելեաց քաղցր տեսութիւնից,
Պանդուխտ տանջվումեմ երկար տարիներ,
Ասստակած ուտում իմ պարապ օրեր,
Հանգիստ էլ չունեմ,
Աստուած, ինչ անեմ,
Քայլ ինձ նմաններ, թէ ինձ կլսեն,
Ասած խօսքերիս ականջ կդնեն,
Եւրեանց հայրենիք զուր տեղ չեն թողնիլ,
Օտարի դրան դառնապէս տանջուիլ.
Քիչ կվաստակեն,
Քայլ հալալ կուտեն:

Ակք.

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ազգիս Վեհ. Հայրապետն ամսոյս 13/ն բարեհաճեցաւ վերագառնալ Բիւրականայ ամարայնոցէն ի Մ. Աթուս:

Նորին Վեհ. Արբութիւնն անցեալ Յուլիսի 8/ն, ի ցաւ սրտից համօրէն Ազգիս, ենթարկուած էր մի ուրիշ ծանր եւ տագնապաթի հիւանդութեան, որից հետզետէ լաւանալով՝ այժմ վրտանգը բոլորովին հեռացած է, եւ այսր վերագառնալէն ի վեր հետզետէ վիճակը աւելի բարւոքել կշարունակէ:

Հ Ա Կ Ի Ս

ՏՕՆԻ Ա.ՆՈՒԱ.ՆԱ.ԿՈՉՈՒԹԵԱՆ

ՎԵՇԱՓԱՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԶԳԻՍ

Տ. Տ. ԳԵՂՈՐԳՅԱՆ Դ.

ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԵՐԵԳԵՐԵՑԻ

ԳԼՈՐԳԵՑՆ ՃԵՄԵՐԱՆԻ Ա. ԷՋՄԻԵԺՆԻ.

Ամսոյս 25/ն Ա. Էջմիածնում մեծաշուք հանդիսիւ տօնուեցած Ազգիս մեծագործ Հայրապետի Անուանակոչութեան Տօնը յաւ Ազգիս մեծագործ Հայրապետի Անուանակոչութեան Տօնը

Մայր Ալուսոյս Գէորգիան ձեմարանի Ալթերօրդ Տարեգարձի Հետ միասին:

Առաւուեան Ժամանակութիւնից յետոյ ժամը 9 ին Տաճարի զանդակատան առաջ սահմաննեալ ճաղբանութիւն կատարուեցաւ. եւ ի կողմանէ Համայն Միարանութեան ներկայացան ի Համբոյ Ա. Յօյ Ա. Հայրապետի երեք բարձրաստիճան Նպիսկոպոսունք եւ ընկալան Խորին Վեհաջափառութեան սուրբ օրէնութիւնը:

Ա. Պատորագից յետոյց զմբ մատոց Գեր. Գրիգոր Նպիսկոպոսն Աղավիրեանց՝ Միարանական Աւխուր ձեմարանի Սանունց Հետ միասին՝ զգեստաւորուած եւ խաչիւ, խաչվառաւ եւ եկեղեցական շքեղ Հանդիսիւ «Քաջաճապատի» շաբականը երգելով գնացին ձեմարանի, որոց Հետեւումէք տեղական եւ ուխտաւոր ժողովրդեան խուռն բազմութիւնը եւ ձեմարանի Հիւսիսային սիւնագարդ գրան կամարակապի առաջ • Ա. Սուրբ Գէորգի • շարականը երգելուց յետոյ թափոր կազմելով ձեմարանի Վեհափառ Հիմնադրի ծնողաց Համար Հոգեհանգիստ կատարեցին; Հոգեհանգստից յետոյ Գեր. Գրիգոր Նպիսկոպոսն Աղավիրեանց բարձրացաւ ամբիոն եւ պարզ ու ազգու խօսքերով բացատրեց ներկայ Տօնի խորհրդաւոր՝ եւ Հանուրց Հայկազանց ուրախութեան արժանի նշանակութիւնը, յորդորելով ձեմարանի սահնունց որ ջանան նոքա խրեանց ամենայն կենցազօգուտ ուսմունքն ու գիտութիւնքը հիմնել Գրիստոնէական Հաւատոյ եւ Ա. Աւետարանի ճշմարտութեան եւ բարոյականութեան զերայ:

Ապա ձեմարանի մեծ. Տեսուչ պ. Ա. Նահապետեանը ամբիոն բարձրանալով կարգաց անցեալ 18^{84/82} ս. սումնական տարւայ Հաշիւր եւ Հանդիսականներին ծանօթացրեց ձեմարանի անցեալ եւ ներկայ ուսումնական դրաւթեան եւ ուսուցչական ժողովոց կարգադրութեանց Հետ, որը ամբողջապէս կհրատարակենք Արարատի Հոկտեմբերի ամսատետրի մէջ ի գիտութիւն Աղգայնոց:

Այս փառաւոր Հանդէօք վերժադաւ ժամը 12 ին ձեմարանի սանունց սրտառուչ երգերով եւ առա բոլոր Հանդիսականք հըրաւիրեցան ի ճաշ, որ պատրաստուած էր Մայր Ալուսոյս Միարանութեան սեղանատանը; Նոյնպիսի վայելուչ ճաշ պատրաստուած էր եւ ձեմարանի սեղանատանը ուսուցչաց եւ ուսանողաց համար, որը տեւեց մինչեւ 3դ ժամը, յետ կիսառուր, ուր ու-

սահմանը եւ աշակերտք եղանակեցին աղբային երգեր եւ ուսուցիչք ատենախօսնեցին:

Երեկայեան ճրագավառութիւն էր, եւ թէ տեղական եւ թէ ուխտաւոր ժողովուրդք մինչեւ ժումբ 9 կմիսիթարուէին ձևաբանի սահմանութիւնը քաղցր երգեցողութեամբ: Խոկ Նորին Վեհափառութիւն Անհարանի լուսամուտի առաջ նստած կղիտեր իւր չոգեւոյք որդւոց այս շքեղ հանդէսն եւ կմիսիթարուէք հոգւով:

* * *

Ամսոյս 10ին Մայր Աթոռոյոյ Գէորգեատն ձեմարանում ոկայեցան գառատուութիւնները եւ բայցուեցաւ նորա ձեմարանական վերջին Պ. Ասարանը. ուրեմն ի վերջ ներկայ ուսումնական տարւոյս Տեառն ողորմութեամբ ձեմարանը լրացներով իւր իննամեայ թէ Պալրանոցական եւ թէ ձեմարանական գասընթացքի շրջանը, կընծայէ Հայկ. Նկեղեցւոյն եւ Ազգին իւր առաջին պըտուղները ի լրումնյուսոյ Ազգիս եւ ի կատարումն բարձր նպատակի Վեհ. Հիմնադրի:

* * *

Զանազան գաւառներից եւ գիւղերից բազմաթիւ գրութիւններ ենք ստանում, որովք բողոքումեն թէ եկեղեցական մեծ գումարներ են ի կորուստ մատնուում ոմանց երեցփոխանաց անբարեխզգութեան եւ գործակալաց անհօգութեան պատճառաւ, եւ մինչեւ անգամ երեցփոխանաց եւ գործակալաց այս գործում միմեանց հեա հաւասարապէս մեղսակից լինելու ապացոյցեր են յառաջ բերում:

Տենք առ այժմ այս գրութիւնները չենք տպում, այլ բաւական ենք համարում զգուշացնել նոցա եւ նկատել որ Աստուծոյ Տան եւ զիրենք ընտրող հասարակութեան դէմ գործած այս անհաւատարիմ ընթացքը մի այնպիսի սրբապղծութիւն է, որը երբ եւ ից! ենթարկելու է զիրենք Աստուծոյ եւ Հոգ. Մայրագոյն հշիանութեան առաջ օրինաւոր եւ ծանր պատասխանատուութեան եւ վրէժինգրութեան ներքոյ: Միեւնոյն ժամանակ չենք կարող այսօրինակ գործերում չմեղազրել եւ այն հասարակութեանը, որը անսարբեր է եւ ամենայն արթնութեամբ չէ հսկում իւր եկեղեցական գումարների թէ օրինաւոր գործադըրութեանը եւ թէ նոցա ճիշտ համարառութեանը: Թողունք եկեղեցւոյ այն բազմատեսակ պէտքերը, որոնք հոգացվումեն այս

գումարով, ոչ ապաքէն նոքա են միակ հաստատուն ազրիւրներն նաեւ մեր ծխական գալրոցաց, որոց մէջ պէտքէ կրթուին եւ ուսանին աղգի մանուկները:

Արդեօք ե՞րբ պէտքէ մեր ժողովուրդը հասկանայ մեր Եկեղեցական Վարչութեան ժողովրդական համերաշխ ուղղութիւնը եւ փոխադարձ պարտաւորութիւնքը, եւ կարողանայ ըստ արժանույն գնահատել եւ յօգուտ իւր գործածել իւր ձեռքին ունեցած այն իրաւունքները, որոնք օտար ազգաց ժողովուրդքը նոր են ջանք անում ձեռքբերել մեծամեծ գժուարութիւններով:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ի ԽՄԲԱԳԻՌՈՒԹԵՆՔ «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐՈՑՈՒՄ

Առաջիկայ Դեկտեմբեր ամառում «ԱՐԱՐԱՏ» ամսագրոյս Հնգետասաներորդ շրջանը լրանալով 1883 թուականի Յունվարից պէտքէ Վեշտասաներորդ (ԺԶ.) շրջանն սկսի:

Ուստի ինդրումեմք մեր Գործակալներից, որ փութան մինչեւ ներկայ տարւոյս Դեկտեմբերի 15ը ծանուցանել Տպ. Ժողովոյն «ԱՐԱՐԱՏ» ին բաժանորդագրուիլ ցանկացողաց անունները ճիշտ հասցէներով:

Մեծայոյս եմք, որ մեր սիրելի Աղգայինք, ինչպէս մինչեւ ցարդ համակրած են «Արարատ» ամսագրոյս եւ իւրեանց խրախուսանքը չեն զլացած, նոյնպէս կիութան յառաջակայում եւ միշտ միեւնոյն զգացմամբք բաժանորդագրուիլ եւ օգնել սմին:

Արարատի թերթից քանակութիւնը, ուղղութիւնն ու բովանդակութեանց ծրագիրը եւ տարեկան բաժանորդագինը միեւնոյն կմնան: